

«Ամերիաբանկ» ՓԲԸ էական փաստերի և տեղեկությունների բացահայտում

Moody's միջազգային վարկանշային գործակալությունն Ամերիաբանկի վարկանիշը բարձրացրել է Ba3

Moody's միջազգային վարկանշային գործակալությունը բարձրացրել է Ամերիաբանկի՝ ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշը B1-ից Ba3 և արտարժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշը՝ B2-ից B1: Վարկանիշը բարձրացնելու որոշումը պայմանավորված է Ամերիաբանկի վարկունակության բազային գնահատականի (BCA) b1-ից մինչև ba3 բարձրացմամբ: Բանկի վարկունակության բազային գնահատականի՝ մինչև ba3 բարձրացումն արտացոլում է ՀՀ բանկային համակարգի բարելավված մակրո պրոֆիլը և բանկի կայուն լավ ֆինանսական ցուցանիշների համադրությունը: Բանկի վարկունակության բազային գնահատականը հիմնված է ակտիվների պատմականորեն բարձր որակի, ամուր կապիտալի դիրքի, կայուն եկամտաբերության ցուցանիշների, բավարար իրացվելիության և ֆինանսավորման դիվերսիֆիկացված բազայի վրա:

Բանկի՝ երկարաժամկետ կոնտրագենտի ռիսկի վարկանիշները (ազգային արժույթով և արտարժույթով) Ba3- ից բարձրացվել է Ba2:

ազգային արժույթով երկարաժամկետ ավանդներ. Ba3/NP
արտարժույթով երկարաժամկետ ավանդներ. B1/NP
վարկունակության բազային գնահատական. ba3
կոնտրագենտի ռիսկի գնահատական. Ba2(cr)/NP
Հեռանկարը. կայուն